հաշանկ հարկանէր ․ և փայլն ցանկալի 'ի սրբա-
սուն անտի խորանաբնակեալ՝ որպէս զԱստուա-
ծային անկապուտ փառաց ընծայման պաշտամամբ
տարածուածաւ, յանդուգականն լոյն ղերձու-
թեանն անդրին դանձու տուայման 'ի յոյս՝ գըւ-
ղութեանց փափաք զարթուցանէր ։ Դաւան այնու-
րիկ ախորժ բաղձանաց 'ի լեառն բազմագումար

խոստմունք երանից գեղեալ բանականաց՝ 'ի ճղնո-ղական հանդէս նուաստակէին անհանգիստ արիու-թեամբ, և հանապազատեւք մաղթանաց հակմանք հնդրէին գիտութեայ նշանին կենաց անդրէն յայտ-նութիւն ։

Նա և յետ յաւազանին լուսոյ արգանդէ վերա-ծին յորդեգրութիւն Հօրն երկնաւորի ծննդեան ատեան Թորգոմայ՝ և նոյն իսկ նա մշտապայծառ արեգակն՝ աւետարանին լուսով բազմաճաճանչ՝ որ բազմանեայ յերկար ժամանակաւ ընդ գաւա-ռաւն վերայի տարաբերկելոյ մթին խաւարութեամբ նշուլապոյլ ծագէր 'ի ցոլման Հայկականս զարմի լուսաւորիչ, 'ի ճշգրտապատում հատուած զրու-ցոյ՝ արդարանոյ բանից տարածութեան եղեալ ի-րազեկ, որպիսոյն ասխին դնացիք 'ի նոյն խեկ 'ի խաչապաշտէս լեառն Վարդայ դէմ եղեալ՝ Լուսաւորչական դերուանդ շնորհին ստացուա-ծով 'ի դեռաշխարհիկ ճոխութեանն փառս փառ-թամանաց փութայր երագէր ։

Բայց քանզի Լուսաւորչին բարեհաճ կամացն տնօրէնութիւն՝ յայլում ևս ժամանակի ապագայ դարուց եկելոց՝ էր շնորհապարգ պարգեւ վերնա-ծեր բարեաց խնամով պաշտել, յայտնութեան Տեառն պայծառ նշանին արժանանալ՝ ոչ 'ի

դէպ Նմա յաջողէր։ Ուստի և 'ի լերին անդր խաչադրեալ 'ի ստոյն փրկանաց փայտին հիմնակառոյց հաստատուն բարձրաշէն սրբոյն եղեալ եկեղեցեաց, և հողխաղաղ բանից սփոփանօք զորս 'ի խաչադրանքն լերին բնակէին մաքրութեանն զաւք կուսանաց, և յաւարքնակրօն վանականց Ճգնաւոր այլ ընկերակցեալք, սիրով թաչալերեալ՝ խրախոյս անխոտոր սրտի մատուցանէր՝ մշտնջենաւորն յաղօթից կալ մնալ 'ի հսկումն հայցուածոց, և 'ի սրբութեանն ուխտ սխրալի իւր սրամբերանալ, մինչև այց արարեալ որ 'ի վիմին պաշտօնս զջոգևորական շքեղ ճոխութեանցն զանձեաց զարդաճան՝ Վերին անմարմնութիւն, Նոյնպէս և բանալ՝ յորժամ հաճեսցի՝ 'ի Հայաստանս ազգաց տիրապէս փառօք հարստութիւն։

Անցեալ գնացեալ անդարձ հոլովմամբ բազմամեայ դարուց շրջանակիր արփիադրեալ աւուրցն բոլորումն, և հրաբորբոք եռանդն բաղձանաց 'ի պատահարկողն խմբից խաչանէր սրտի՝ զկանդակաթն անէնչի տոչորումն մշտարծարծ վառմամբ տառապագուցեալ, զարդարատխառն աղօթից մշտամատոյցն խնկոց զծուխ՝ բուրվառաւ կամաց 'ի բարձունս ուղղաբերձ իւր սխնացուցանէր։ Այլ կամք ամենակալ բարձրութեան փառաց Թագա-

ւորի վայելչոյացն ուրախ լնուլ զուարճութիւն ազատ հաճութեամբ անխոնարհելի կացեալ մնացեալ՝ 'ի ցանկալւոյն արփիացոլ ծագմամբ տեսութենէ, կարօ՛տ կացուցանէր ։

Ազնաւորաց մաքուր ոյծեմանց՝ պարուց Ազնա-ւորաց անկեալոյց բաղձաղխակ աչաց հայեցուած՝ համանշմար 'ի խորշախորս լերին աշուցեալ՝ ընդ մաքրաշուխ զնոցին հեռոց զեղադաքայլ որըն-թաց վազումն յանմատոյց դժուարս ծաղկաստո-րոս բարձր քարաժայռից 'ի դեղերումն աճեալ շքեղացուցանէր ։ Այլ տիրածանուկ թագնութեան Տերական մածեալ նշանին անեղեւակ անյայտ քօ-զարկութիւն՝ 'ի տես և 'ի հաս մեծութեան շնոր-հի ուրերեալ՝ զանձուկ տենչանաց նոցին անդոր-րութեամբ 'ի պսակ աճեալ երջանկաբար ո՛չ փա-ռապարդէր ։

Լի՛ էին համակ բարձրաբերձն լերին ընդար-ձակ վայրից բնակարանք՝ անձաւամուտ՝ վիմար-գել՝ ձորաբնակ գետնախուշ աղանց բազմու-թեամբ, և յամենայն կուռ։ տիրակիր տեղւոյն՝ բարեպաշտութեան կամաց ախորժանօք և խաչա-պաշտութեան որոց բաղձանօք՝ հետազօտ երկր-պագուացն պսակք 'ի խնդիր դեղերեալք ան-հանդիստ սրբութեամբ ։ Բայց երկրպագելըն ամե-

Նկատէ՛ միայն ցուցակութեանդ փառաց Ճառա_ գայթից՝ յանձկութեան նոյին կրկին անընչանաց դիւրումն զթափելեալ, յառաւելագոյն եւ առ_ ջորումն եռանդնանկէզ կարեաց կարօտութեան հրոյ բորբոքեալ՝ յաջօքն բացօք յիբօրէն տեսու_ թեան հանդիպումն զնոսա ընաւ խանդակաթէր։

Քանզի զիա՞րդ հնար էր արդեօք խաչախըն_ դիրն նոյին սրտի զգերաբաղձն պատմուճան ան_ դորրական սփոփանացն զգենուլ, եւ զախորժա_ կանն հանդիսա 'ի մշտատենջն բարին ընդգրկել, այն ինչ որում կաթողին ցանկալին սիրով՝ զանձն անմահութեան 'ի մխիթարական քաղցրածաւալ խորս անյայտացեալ, յանախորհականն խնդութեան անտի պարգեւէ, անհնարորդ զնոսա անդ կացու_ ցանել։

Արդ՝ այսպէս զանձն յուսոյ 'ի շրջանս ամաց եօթնեակին յոբելենաց Քրիստոսադարդ նշանին Տերունի 'ի բարձրագագաթն մխիթ անդր Գո_ ղգոթայ՝ անտես 'ի մարդկանէ խնդրեաց հաւ Ճ կամօք տարածաւալեալ, եւ յայնկանեացն ապանց Ճշնա_ րակն ընտրելոց զաւուց փափաքանացն բղխե_ ցանկացեալ, եւ մշտածաղ լուսոյն Ճառագայթիւք զնաչարաշետ փայլացն սուծմանս փառազարդա_ րդեա հրաշալի ցուցեալ, եւ նիւրն սերակիր նշան

փրկավործ հրեշտակային երգոյն փառաբանու-թեամբ մինչ բարբառեալ, 'ի լըմանէն սրբոյ՝ կեան յանկարծ, զոր խաչեալն Յիսուս յան-ճառ խորհրդոյն իւր մՃիւս առաջման հաստատեաց, ճշմարտեր բերովք բարձրութեան երկրին 'ի յա-գուլով լինելութեան գերապանծ շնորհին՝ յանուղղա յաւիտենն անզրաւ կենաց զնորա կերակրել այն Իսրայէլի զԱստուածային քաղցրութեան զմեղր բարեաց և զառատաբարութեան հոգւոյ զիւղ 'ի վիմէ խաչակիր ժայռին դիեցուցանելով․ յորմէ իբրև 'ի գերակատարին ծաղկոյ բարձրութեան երկնից՝ արփիափայլ իմն ճաճանչաւորեալ նշանն փառաց անանց փեսային՝ պայծառացեալ լուսով առաւօտեաց 'ի պարծանս փառաց մեծութեան Հայկեան երամոց։

Նոր ինձ երեւեալ 'ի մեծարան անդր Վարա-գայ երկրորդ Պատրանիկէ, և կամ կայսերանոյր անն Հեղինէ 'ի Ճգնաւորական վարուցն գաւառս հող-ւոյ թագաւորեալ, և մշտահաւաչ ու կեն-սակիր սուրբ Խաչին անեղանելի սրտի խանդա-կաթ հալեալ խաչախնդիր հրաշապետ Թոդիկ սրբատեսոյն ընդ Յովելայ իւր աշակերտի․ ոչ բանիւն բանութեամբ զՀրեշտականին խոստանեալ զխումբ 'ի խաչամէթերն կենդատպահետ շնորհա-

զեղուն շահմարանի այնր ցուցակութիւն, այլ տպաւորելու օրհնութեան բերանոյ բազմօրեայ պա-հոց անտառապատութեամբ և աղօթանուէր ալեւ-որկու պաշտօնէից պատարագօք զանբռնադա-տելին թախանձել զընութիւն գերագոյ ամբա-խոկութեան ստեղծողի երկնի և երկրի, քաղցրա-լուրն պաշտամանց խորոց ծառայից ախրական ունկամբ 'ի խաչահայցն խոր ալեաց խանդարհեալ՝ ձիրս պարգևաց անկապուտ փառաց Գրիգորեանս հօտի զարխնաման փրկանակ փայտին ընծայել:

Ո՜վ ամբաւ անեղելոյ մարդասիրութեան խնա-մոյն Աստուծոյ, ո՜վ գերունակ շնորհին Աստուա-ծային, որում Յաբեթեանս տոհմ զատ ար-ժանի: Զի այն ինչ խաչաբարձն խանդակաթու-թիւն խաչելոյն աշխարհիս բարեաց՝ անհանգիստ զեղուն գիշերս յաղօթս զճգնակիր աղանցն սրտի ողջակիզեալ համան՝ զգթութիւն 'ի տեսութիւն գերագոյն բաղձման խնդրելոյն կաթողնէր, ահա յանկարծուստ 'ի միում գիշերի ձայն ահագնա-գոչ զայսր լերին ընդ զղրդմամբ, և հրեշտա-կաբարբառ աւետեաց պատգամ քաղցրանուագ երգով սրտացեալ՝ 'ի գերահրաշ երևման հան-դէս զհոգւոյն խումբս խրախուսէր, և համա-ծուալ զքանչելափառ լուսոյն փայլատակմունք

զխաչակիրն վիմով ցոլացուցանել՝ յաղջամղջ-անդր գիշերի մեռուցիկական գերարփի ցերեկս ճաճանչէին յոյժ հրաշապայծառ։

Յարևան յայս հրաւէր հրեշտակաձայն բանից քաղցրութեան, և գեղազն 'ի վեր սահմանս ամբարձեալ՝ մարմնով զուարթնոց, 'ի բարձրա-կատարն վիմին սեռանէլին զհրաշալուսեանն ծաղ-ման պայծառութիւն՝ երկնատեան սիւնս լուսա-կերպեալ զխաչապաշտեան վայրին ամղեաւ. և անմահութեան բուրումն անուշից զնորին զմայ-լեալ անդէն՝ սխրազարդեալ Աստուածային փա-ռացն յայտնութեան շքեղ փայլուածովն։

Ուստի և անդանօր Եղեմայնացարձ փափ-կութեանն ախորժ հեշտութիւն՝ զկայծակն 'ի գնին յերանաւէտ վայելչն պճնէր յաւէտ հրա-շալէս, և փառք երևմանն ևս քան զևս 'ի պատնէշելի փայլին ճոխացեալ՝ արեգակնացին յաղթէր ճառագայթից յոյժ հզօրապէս։ Գիշե-րոյն մութ մառախլապատ լուսացայտ վառամբ արփիացեալ՝ զփառս յայտնութեան կենաց նշա-նին պայծառագոյն ևս ցոլացուցանէր անդ զար-մանալէս, և տիւն արևազարդ զերրորդ նշուլից ցայտմունս սփռեալ՝ զաճապրութիւն տէրութեան հռչակէր գերապայծառապէս։ Դասք հրաշատեսից

'ի վերա խնդի և պարծանաց ատամն բերա-
նոյ՝ փառաց փայլելոյն մանչել մայրն 'ի հան-
դէպ յարգման ըղձիւ մեծացել, և աշխարհութիւն
Աստուածեան հրաշից զմեզ ժամն առաւ հրա-
շաքերս վառեալ՝ յետս ընկրկեալ նոյոր 'ի
կցկտուն գիտակս նորին գնացյոյոցն։

Արդ՝ այն ինչ նորին խաղ ապաւինեալ՝ ազատն
զաւակը յայտնեալ գնծութեան և երկնային վերա
ամենայնին հանդերձ սփռեալ՝ 'ի փառաւոր այնմ
երկնային պաշտպանել կային 'ի չքնաղն գերազան-
ցութիւն, և չքնաղեալ արփիակերպ մաննանի
առաւ 'ի վերերկրեան մասին անմահ առաջնոյն,
յորում և անմահն խաղութիւն յառաջին չարյա-
րանց 'ի գանձս բարձեալ Քաղաքիս առակը
մեծութեան գեղն յառաջադրեալ աշխարհի արկեալ
հանդիպեցյ, աչօ մխիթարութեամբ նշանն Տեառն
'ի բարձրանց առաջարան անուն Խաչափայտի
Աստուածայինն փառաց հրաշալեցեալ անման փե-
րայի լուսաւորեալ զաւշտ հանդարտեան' պարփա-
կեալ լուսաւորեալ փայլմանն ամենայն գեղեցկա-
ցութիւն, և յանմարմնոյն նուէր պաշտամանց
փիլատոսեան շարժ գերին պար բոլորելով։ Աս-
տուածաշնորհ փառաց մերձաւորելք 'ի սրբազան-
մանն յարկ ամեն Տեառն' զախորժականն անկել

ընկալութիւն ։

Վասն որոյ անգէտն ու նմին գերագուարճ խնդութեան որոց ըմբռնեար, և հոգեպարարճ մխիթարութեան փառաւորեա այլա խրախու-սանք 'ի Ճեմն Ճախրանաց Ճգնաւորական Ճե-ղնթաց ամպ 'ի նշանդրնելոյն գիտելով ատճառ, զձեռայն փայլ արիւնաման՝ իշխանապատ փառաց աՃեցութեանն 'ի լուսաւորի պՃնամն փառքին-նագործ բարձրանալ անմատելին 'ի վերայ որոց սե-րովբէն, և բաբխմամբ անուշից յաւէտ քան զԱս-տուածային խորանն Մովսիսեան՝ լսել զա-ձայն աղերսն 'ի հեշտալի գեղգեղանս մաղթելոյ ու փայտն կենաց ։

Այլ եւ անտանել զխանդս արտասուաց 'ի խնդութենէ սրտի այսր գերադոյն և Աստուա-ծային շնորհաց հանդիսիցելոյն՝ պանդխտ առաջնո-նոր գետո զնոյացեալ ։ Աղանօր եւ լսել զձա-հութեանցն ձայն գերախառն աւետութեան արխա-ղայից նշանին արմատացելոյ՝ զփառս փրկչին յաղթական երգով բարձրացուցեալ, 'ի տեսա-նելն զանարգելն անմահն զոհի մարմոյ սարդա-րան՝ զերկնաւորն զաւուն արիւնանեկն սեղան յաւութեան՝ զերագէս մարմնով ընկեռալխեց մեծմամբ զոՃարան՝ զերաշխաւ լուսով և զա-

տուց հրեշտակաց յարգական պատուով սպասա-ւորութեամբ յինքն հանգուցեալ։

Բա՞րէ գերահրաշս շնորհաց. ո՞վ 'ի բազմա-ժամանակեայ աւուրց բաղձացեալ բարեաց. քան-զի ոսկոյն գոհարն մեծագին փառօք տանիջակա-նէր, և որ 'ի վերայ մահացուս վերադայեալն ոս-կւոյ ամենայն էութիւն՝ դերկացուն խիկ փառաց շքեղութիւն Աստուածայէն զօրութեր պայծառ պերճացեալ էր։ Հարին անարատ երկնաւոր անմահ փեսային՝ 'ի սուրբ քառամանեակ խաչմանն զար-դու գերապոյն ձրիւք վայելչանայր, և խորոյ որ-պանդի լուսածին որդւոյ՝ փնդրտուական խնդու-թեան մատուցեալ պարգև՝ ծխապաղէմ զուար-թացուցանէր։ Դրախան ախտատանիկ յերուսամ վայրամիջի բարձրութեան անդւոյ՝ զկենոյն ծառ ահամանէր աշխարհային լուսատեղի տասմք կա-նաչազարդեալ, և 'ի բերս նորա բարութեան Հայաստանեայցս աշխարհ վայելեալ՝ լցաւ անմա-հութեամբ։ Պ. էմն բարձրաբերձ՝ վիմակաւոյն արձանն զանձևանահան Պ. խմի ընծայեաց զբարձ-րութեանն դործի, և փշրեալ մանր խորտա-կեցաւ ամբարտաւանն հպարտութիւն դժնեայ դաւողին։ Գործարան լերինն Պ. արարայ՝ դ'ի յերկիրն անկեալ անմահ ցօղենոյ արգիւնաբերի

զկամեցեալ՝ լուսաճառաշ փառօք 'ի խորհրդարանն մեծարելեաց կատարման կալ անպարտելի կամծին բուռոյն, և Աստուածայարդ շնորհացն ցուցման 'ի հանդէպ Հայկազանց գեղուն շահմարանեալ՝ 'ի կշտամբեալ վայելչին պարգևս հոգւոյ բարգաւաճեաց։

Վասն որոյ և որք այսպիսի բարձրագոյն և Աստուածային բարեացն շնորհի արժանի գտան՝ խումբք հրաշաւելից՝ 'ի ծունկս խոնարհեալ աձև և ոտիմամբ առաջի կենդանի նշանին, և գետնամած զխայոյն համբուրեն զԱստուածավայելուչն երկրպագութիւն խնդագատար որոյ հրճուանօք մատուցեալ՝ գոհանաբան զանութեան զձայն բարձր հնչէին, յԱստուածարարգև վերնական ձրիցն շնորհս համակ զմայլեալ։ Եւ չէր այնուհետև անդր 'ի խաչազանծն լերին ումեք անանել կամ լսել, բայց եթէ զբարձրանուազ երգոց ալէլուս հրեշտակաց և մարդկան՝ 'ի մի գառանցութիւն բարեբանութեան փառացն Յիսուսի մեծարանելոյ, և զհրաշափայծառ մխիթարփրկագործութեան երկնայինս սեանցն փայլատակմանս՝ 'ի շուրջ պանծանաց Քրիստոսաբարձ տերանկի պատուանդանի սրբութեան կենաց նշանին։

Եւ 'ի դէպ արդարև ասացաք. զի փառքն

Աստուծոյ ելից զնեաւն՝ Տիրական շնորհաց զոր-մանալեօք, և հրանիւթն սեւից որբոձոյն եր-գով տպաւորութիւն՝ Քրիստոսեան խաչին 'ի պրանչից սխրանս զմայլեցոյց զճգնաւորս ընական լերին այնր բազմանօք, և հանդիպումն յայտ-նութեան կենաց յաղթանակին՝ զանստուգութեան մարախ մրրկան զնկրնոցբեա զնուրան Քրիս-տոսի յառաջաբեք մարուր աղօթից՝ յանհամեմատ ձիրս զարգարեաց բարեաց պարգևօք. և Ա-ստուածախայլ փառայն տեսիլ՝ յամենայն կողմանց անդր զումարեր զաշխարհին ընակչաց խումբս բազմութեան՝ Ճեպեբաղ հետոց ընթացից սրա-վար շաւղօք։

Քանզի ո՛չ իբրու վաղանցիկ իմն երևոյթ զփայլունակ շառաւիղս յինքն լուսոյն ամփո-փեալ համածաւալ պայծառ տարածումն՝ անհետ նսեմանայր, և ո՛չ ևս լուսակառոյն սեանց Ճա-ռագայթք յանյայտ խորութեան մեղի շանձմարան զգայական նշոյլն փարատեալ՝ աներևակ թագ-նութեանց զխաչարանն վայրի լուսարան թա-փո՛ւր կացուցանէին, այլ զասուրս երկարատն գերաճանձանց զանզսարաշար ծաղմանց տոփա-ցեալ՝ զդատուն ողջոյն 'ի տեսիլ անդր զոր-մանալեաց խո՛ւռն փութացուցանէին։ Որոյ ան-

զԱն առ 'նմին գրոհ ընծայեալ առ հասարակ 'ի կողմանց կողմանց շրջակայ երկրին՝ ձեռն ընդ ձեռն ոլորմամբ 'ի լեառն վերանալին՝ եղխեկողաք և քահանայք, իշխանք և ռամկականք, և ամենայն Քրիստոսադրոշմ ազանց բազմութիւն 'ի վերայ հասանել Աստուածահրաշն փառօք այնր երեւմանս։

Ապա եղաւ և մեծ իշխանն Ուշատնեաց Վարդ անուն յաղթանակաւ զօրաց բազմութեամբ պայազատագունդ ուղխից, և ամենեքին առ հասարակ յաշխարհահայեցման լերինն եկեղեցայեալ՝ գհրաշելին երեւմանն հայեալ հմանայքն, և 'ի պատմութենէ բանից հրաշափառ խմբից զերագայինն փառօք Կենաց նշանին յԱստուածակերպ խորանն լուսոյ հաւատով հաստատ ծանուցեալ, խանդակաթ սիրով և երկրպագեալ սրտիւ խուռն 'ի խաչահանդիստ անդր եկեղեցին վերելով, և ըզխաչանման արեւանեկերկ 'ի սրբայարկն սեղանոյն լուսաւոյն պայծառութեամբ բազմական տեսեալ՝ Տերագրական երկրպագութեան յօրդանաք 'ատաջի խնդրեցին՝ ախոյեան պատուով փրկագործելին հրեշտակաց մեծարելով ։

Զօրանայր առ եւեռն ըղձաձայն գոհութեան բարբառ յամենեցունց, և այր իւրաքանչիւր 'ի տաղաւարաց երկիրպագեալ սրտին նշխարս մատու-

ցանէր բարերանութեան խորանին 'ի փառս խոկական տիրակիր կենաց տապանակին. և բուրմունք անուշահոտ խնկոյն ամպախիտ իմն հոլոնացեալ՝ զանդաստաղիր ամբոուն բարձրութեան գյարկն բնակութեան տաճար նշանակիր զմայլելի իմն փառաւորէին : Իսկ այնպէս 'ի հոգևորականն շնորհս երկնաձիր բարեաց բնաւ բազմութեան զերատաձայն շքեղ զարդարեալ, և այսոյն սեռութեամբ և զխնկոյն զետանման երկրպագութեամբ, և շքթանոյն ըղձական սիրոյ համբուրիւ զնշանն փրկութեան, Քրիստոսադրեալ իմն Խախացեալ՝ զուարճ երկրպանօք և մշտաձայն գոհութեան բանի բարբառով զանդուղական այսց պարգևաց զշնորհատուն օրհնելով զԱստուած յերկս անդադար՝ 'ի տեղիս խորանաց զառնացին՝ առ ամենայն հասակ մարդկութեան մշտաբարոզ լինել աւետարանիչ :

Այս ձիրք անհամեմատ անդատուամ բարեաց 'ի փառս Հայաստան աշխարհի յամենատուր Տեառնէ պատրաստեալ. այս շնորհք անպատմական անկշիռ բարեզարդ երախտեաց՝ 'ի խաչելոյն փառս մեր Աստուածն Բանի յանձնառ մարդասիրութեն 'ի մեծութիւն տանս Թորգոմայ ձրի արդիւթեամբ պարգևեալ. այս մեծութիւն ամենահա-

բուռն ընաշխարհիկ ճոխ փարթամութեան՝ յերկրածածուկ անդէնն գանձէ յԱրփանազեան զարմիս պերճութեան օժիտ ուղերձեալ։ Քանզի զի՞նչ այլ եւս մեծութիւն ամբաւ հարստութեան՝ քան զարիւնամած ախրարդոյ կենաց նշանին լինել ստացական։ Ընծայք հրճուանաց հինն Իսրայէլ ՚ի տօնս նաւակատեաց՝ զԱւետեացն երկիր՝ զբղխողն խաղոյ եւ մեղու ՚ի ժառանգութիւն նիկեան ունելով, եւ զնո՞րդ յաւէտ քան զնոյն Տունն Թորգոմայ ո՞չ զուարճացի յառնջականութիւն փրկութեան փայտին, որ երկնաբերձ եւ անդորրական ստնդուղք է հանելոյ ՚ի վերնագաւառն՝ յիսկական աշխարհն Աւետեաց։ ՚Ի պատկ շինութեան հնոյ տաճարին՝ ՚ի բարեբանութեանն հայցուածովք հանդերձ ճառաբանութիւն՝ Սողոմոնեան ճոխանայր լեզու, զնաւակատեայն հանդէս տօնավայել հանդերձանոյն պատրաստութեամբ ուժնել սիրայլ։ Եւ երբեմն նորոյս այս Աստուածարանիչ չքնաղ բարեզխպութեան հանդիպեալ ազանց Քրիստոնէից լուեալն լեզուք՝ զովեստ գոհութեան անմնաբաւական աջոյն պարգեւոյն քաղցր նուագել։ Ծնունդ ամլածին սուրբ արուեստի արդարութեան գերալոյս արփւոյն՝ ըզծերունի քահանայապետին լուծեալ հրաշալիս

զեղումն կատարեալ' 'ի խնդութիւն համայն ազ-գայնոց զմարգարէաճառն յաւել օրհնութիւն' տուողին այնմ բարութեան, և ընդէր 'ի պեր-ճաշխուն օրհնաբանութեան ո՛չ առատագին ճա-ռից զեղզեղումն' խանդակաթոյն գործէր Հայկա-զանց, պճրաշաւղութեան ահեկալ փծաղումն յա-մալ մխիթ կենսունակն կարապետն ամենայն երկ-նից արքային' յաշխարհ երկրորդ գալստեան Հայ-րական փառաց ճոխութեանց ։

Եւ ընդէր է ինձ յերկրպագոյն պատուածո զեղերին մակածութեան' 'ի յայտնութիւն պայ-ծառ ցնծութեան մերում երկրի ընդ այս նո-րաբանչ աւուր ախրական · 'ի բերկրալինծ հըր-ճուանացն կիրս ծովանայր բոլոր Հայաստան, և ամէն ապեկամն յարդարէին ասպնջակէն ուրք եկեղեցիք նորա · 'ի գերունակ պարծանաց պան-ծանս բարգաւաճէր Քրիստոսափառն Հայրա-պետութեան ինքնիշխան զաւազան նորա · զար-դարութեանն մաքուր պատմուճան զինքեամբ արկանէին ընտրական գումարք եկեղեցւոյ նորա · 'ի զարդ նորափետուր շնորհաց պճնէին համօրէն մանկունք սուրբ ուխտի նորա · յուրախութեան երգոց հանդէս հրճուէին համակ Քրիստոսա-դրոշմ ժողովուրդք նորա · ձայն ովսաննայից 'ի

բարեբանութեան Քրիստոսեան Խաչին հնչէին լուսածին մանկունք ընտանեաց նորա. համայն խրախութեան տօնից կատարէին շինուածք քա-ղաքաց և գիւղից նորա. և մեծագին ադամանդ հանդերձանք տաղաւարաց փայլէին տաճարանք իշխանաց նորա. և այսպէս ամենեքին հայկա-զորք պայծառ սիրայեալ փառօք՝ երանէին բա-րեբաստիկ փառօք ճոխութեան նորա։

Վասն որոյ և անդէն առ նմին բարեբաշխ սրտի յօժարութեամբ 'ի սրբոց տաճարաց շի-նուածս ձեռնարկեալ 'ի պատիւ սիրահրաշ փա-ռաց նշանին, 'ի անկիւն ամս եկեղեցեան լուսա-կերպ սեանցն կառուցելոց՝ գերկատարեան սուրբ եկեղեցին 'ի սրբատաշ կոծափոց փայլուն արժա-նոյ հիմնեալ կառուցանէին, և գեղեան խաչա-պատծ տաճարադարդ պայծառ ճոխացեալ՝ ան-դուլ պաշտամամբ փառաբանութեան մեծին բարձ-րութեան փառաց կայացանէին։ Խաչ գլխին սրբութեան՝ յորոյ 'ի նկարն արիւնաներկ Խաչն Տէրունի հրաշալութեան թեւոց լուսաճաճանչ խա-չարարձ կաւօր թագուցեալ եկաւորեալ, գընդա-կութեան՝ ընդարձակագոյն շրջել շինուածով մի-մնապատասխան արձանակերտ քառանկիւնի խա-չաձև որմոց՝ լայնամիջոց ամփոփակայլ տեսլեամբ

կառուցելոյ, և վասն մխանձանց որոց բնակու-թեան՝ 'ի սոյն պաշտաման կենտակեր փառայն Յիսուսի գնալու շինել հաստատեցին ։

Ուր աշխարհհուրաց խաչակիր որբադրելոց արանցն բազմութիւնք իբրու յանձնառոց հզօր աշտարակ ապաստան կալեալ՝ ապօթակիր Ջգնողական հոգւոցն երկայք, և ապաւինեալ մշտամնաւոր օրհնութեանց կուռ պատսպարանութեամբ 'ի հովուոյն մարտ ընդդէմ բանութեան այսոյն չարութեան մշտայաղթ նահատակել՝ հզօրագոյն ևս գտանէին ։ Եւ Խաչին Տեառնի թէև հրաշից և պաշտպանութեան զամենեքումբք խնամով տարածեալ՝ պատնէշ լսացն են փառաւորիլ օրհնութեան երգովք, և գեղեցկապանծ գնուորն յանեա փառաւորեր դերաշխարհիկ մեծութեան շնորհօք ։

Եւ սոյն յանգանել ասուրց ժամանակաց առակողդն օդոյն խառնութիւն՝ յաճախածին երկարաձմեռն սառնամանեաց ըկանաք գետակեցին ընրին վշտադնացա տառապել՝ առ առորեալ անդոյն խաչակիրն՝ 'ի կարկաջահան աղբերց վառկար մշտասոդ ծաղկաւէտ հովին՝ քաղցրաբոյրն բուրոց դալարագեղ մարմանդին՝ չքնաղակերտ արքայաշէն վանս եօթնադմբեթ արձանահիմն վիմա-

խորհրդի զարմանալեացն ալ, և դիմաւոր նոյն պար-պագայս՝ ընդարձակութեանց երկրաւորեան ընտիր ան-նեկայց ՚ի սպաս ախորժարար Խաչին զուարթացեալ՝ աշխարհի ՚ի Խաչ եկելոց մարդասիրաց՝ սար-կաւորաց և գալոց՝ որք հանդարտութեամբ պաշ-տամամբ ՚ի բարերարութիւն փրկաւետ կենացն փայտի, և ՚ի մշտամնայն անմահ պատարագին մաղթանս՝ վասն շնորհելեան հանցն աշխարհի և բարեկարգութեան ընդ Մաղաքիայն՝ պարապին ցայսօր ժամանակի՝ ՚ի խաչակիր բարեկարգ ան-ձայ ատակերգելոյ ։

Արդ՝ ՚ի պատճառ յանկատութեան պատմա-գրական բանից զանձամբ եկեալ ստանոր՝ բեր ինձ աշխատ ՚ի խնդութեանց բաղադրձու-թեանն յեղանակել բերթութիւն դժար ըն-թացից զբուստի Չաւի, յայտնարարաց ցըն-ծալից ամեանայն չիսուածով զիաշապաշեանին փայլերձութ շրջել յարդաւորութիւն Չաչար-ակս փառաց ՚ի նոյն շարակծել ։

Խնդամ զաարձնայեալ յանձն հրճուանօք, լեռան բարձրաբերձ՝ ընկերեան կենսանակ փայ-տին փրկութեան, որ ոչ համբուրեալքց անկա-պարդ բարձանցն Լիբանանու, առանեալ՝ նո-ճիարեր մայրասանկ նուիթ փայտի՝ ՚ի սապարա-

տաշ՝ ողողաձերձ՝ քերածոյ դրուագս զարդուցի-նութեան Սողոմոնեան հրաշակերտ տանն տաճարի նուիրեալ եւսուր, այլ խաչարդի չեւս իմն փայտեայ 'ի կողաջոյ կայլակոյ Կենդանարարին կարմրերանգ ներկեալ, եւ լուսաձեւ փայլմամբ 'ի հրեշտակաձիգ քրովբէականք այլեւս գահոյս գե-րահրաշ իմն քառաթեւեալ, եւ պայծառաշուք պսակ վայելչութեան յերկնաբերձն գլուխ տի-րանունակ յարկի Ճշմարտութե մեհ Սողոմոնի ա-նուշահոտ բուրմամբ կառուցեալ, յաւէտ եւս Աստուածայնովն դրդանչելատեսիլն ահաւորու-թեան յիւրն ընթերով հրաշից զարմանալիս։

Ցնծա՛ երկրպագել տիրական շնորհօք, լեա՛ն հանդիսարան փառացն Աստուծոյ, նոր իմն Քո-րեբ 'ի Հայաստան երկրի հաստատեալ, որ զ'ի թուփն մորենւոյ ձայնարձակ բոցով մարգարէա-տես հրամանս ցուցակութեան զՃշմարտութիւն՝ ամենափայլ պայծառ ցոլացուցեալ՝ տիրաբարձ փայտին դերաճաճանչ լուսով յայտնութեան, եւ Ճառագայթակերտ ռեանցն փայլածով զմութն գիշերոյ ցերեկութեան փառօք՝ Աստուածայինչ բազմավառեալ՝ յանծախին յարակայութիւն հաս-տատ հիմնացեալ. յորոյ նշմարումն՝ ո՛չ զխաշնա-րածն եւ եթ մարգարէ, այլ եւ զբոլոր բնակչաց

աշխարհին ծնունդս, իբր հօշոտեալ ատից գնդիւք ծնրադրած 'ի գետին երկրպագութեամբ հնազանձուք իմն փութացուցեր, նոր աւետաւէտ բարձրագոյն փառաց Հայաստան ազգին վեհափառս թեփոխ եկեալ։

Ընկերկրեանց խորախորհրդեալ գերակայ փառօք, հրաշագան Սինայ սրբութեան՝ լեռանն Աստուածաբնակ. որ 'ի Ճգնաւորական անտառաշ կրիցն ապարէշ նահատակելոյ՝ խաչահայց մարուր մխենձանց՝ յանձկութեան քարաշար խրճթին լուսարանն՝ իբրու 'ի փաղածակ վիմին գխառնոյն՝ գլուխագորդ ճաճանչափայլ յետոյն Աստուածոյ՝ գմարուր պատուանդան ասիցն ափրաւկան՝ գխաչանման արփնաման՝ աշխոյ փառաւորութեամբ մՃխա նշոյլիցն ցուցանելով՝ ոչ 'ի քօղածիցն անտեսութիւն գարմին Ցակոբայ սրտնես գմմխեսին՝ պատկառելի գհրաշաւեսցն գէմս փառաւորելոյ վայր հաստատեցար, այլ յաւէտ եւս 'ի յայտնաւորել պայծառաճառայեալ խնդալից սրտի նորա Խորայելի նշմարանին՝ ցանկալի ցուցարան անցելոյ կառուցար. և զառանցն նորոց զարխնոգիծ օրինացն տախտակ կենաց առաջնութեան անդի՝ 'ի զգօնութիւն զարմին Ցարեթի գերափայլեցար, 'ի գերակայ ճոխութեան շքեղն պանծանս պճնազարդ իմն արեալ։

Արդարեւ տառապալէս կայր յոյժ մեծաղջն անցեալ հանդիսանօք քաղ. փառաւորութեան, ըստ որում ցանկալի ամենայն աղանց, եւ վայր որբարնակ արանց որբապղեաց. ըստ որում ծաղկազուարճ եւ բուսաբողբոջ քաղցրաբոյր բուրոց. ըստ որում՝ համբաւանաց բարձրագոյն չքնաղ վայելչութեանց. ըստ որում առաջնորդութեան սրբասուն քարանիք կառուցեալ՝ չքնաղիւ վանոյն պճնաթեամբ. ըստ որում՝ շաբաթանն արծաթափայլ տանարակ ազնւոյ հաստաց. ըստ որում՝ փառաւոր մշտածաղ երկնային լուսոյն ճառագայթիւք. ըստ որում՝ արդիւնաւորեր յաղթապատիկ ընդոց ըներկրաւեաց. որ 'ի սրտակ ամենայն գերապարանցն ծըրից ճախաթեանց՝ եւ զնոյն խակ զկենայն նշան խաչանմանին՝ զՍ. ծապատագ ծառն անմահութեան 'ի բարձրակատարն վեմ; խաչակիր ժողովն Գողգոթայ լուսաւորութ փառօք ամենեցեալ՝ յանդուգագոյն սպասու գերակայեցաւ. եւ զամենայն ըստ որում 'ի գալ երանութեան քաղց հանդիսի ածեալ զբաւեցեր: Որոյ եւ քարինք եւ գագաթն Գողգոթայ՝ յերկնածագ լուսոյն ընկղմեալ; եւ բոցաճաճանչ շառաւիղոյն սուրբ բանկիր խոր ընկերեկանք լուսաշողին ցոլացեալ՝ կերպարանացեալ պայծառհայելի զ'ի կերպանս ցուցանեն լուսաթոյր սխալ

երանգաւ երփնազեղ զանձնալ 'ի փառս պայ-
ծառութեան լայնանիստ վայրացդ ։

Մի՛ եւ պարծեացի ձիւնազարդ բարձրութիւն լերին Արարատայ յիւր գերակայութիւն, 'նաւա-հանգիստ ՛Նոյեան զուշով տապանին․ քանզի զու-նիւն զՃշմարիտն ՛Նոյի մարմնաբարձ տապան փրկ-կութեան 'ի քեզ կրելով՝ տուեալ մթութեան զնորայն փառաց տարածեցեր, եւ զերաշխաւ եւ բան զնոյն՝ պայծառագոյն պերճացեալ պարծիս 'ի գլուխ Համբարձման անուանի բլրի պարս-պատաւ քաղաքին Դաւթայ ։ Որոյ 'ի հանդէպ ընդ հիւսիսակողմն ոչ ուրուական արձան յարակէ-ցոյ 'ի Լեդբեանն ժայռի՝ առ 'ի լրումն տախա-նայ շուայտոնին զՆիւսայն յարուցելոց 'ի պաշ-տօն առեալ զոչանուէր յարդման յոյլանդակ խուժադուժ ազանցն վայրենութեան՝ եղեալ զո-հարանի, այլ նոյն ինքն Փրկողին մերոյ հզօր յաղթանակն կենդանատար հանգոյն աշխարհի յա-րուելոյ կուռք գերաշխաւ լուսով տաւոսանալ ․ եւ այժմ ինկ իբրեւ 'ի հաճոյական հանգիստ բնա-կութեան՝ 'ի քաղաքի անդր հրաշանուն տաճա-րի յէջմանն միածնի կոչմամբ անուանադրելոյ՝ ախոյեանք եւ պատուաւոր յԱստուածայնազոյն հրաշի փառաւորեալ ։

Ո՜վ բարերար երջանկութեան, ո՜վ Աստուածային պարգևացդ, ո՜վ անպատում Ճոխութեան, որ 'ի ձրի շնորհացն Աստուծոյ պարգևեալ տուաւ այսմ քաղաքի. որ արդարև աննոյնիւ 'ի ձրիցն շնորհաց փրկութեան փայտին փառաւորութիւն փարթամ փայլփլեցեալ՝ թագ 'ի գլուխ հրճուի հանապազ, և 'ի խնամարկական ամենայօր թևոյ նորա պաշտպանութիւն անկրկբոյ յուսով ապաւինեալ՝ իբրու 'ի խաղաղական անդորր նաւահանգիստ հաստախարիսխ ամուր կայանութեամբ բարեբերութեան մնայ յարաժամ, և հանդարտեցեալ յամենայն յուզմանց չարաչար ալեաց ծփանաց։ Զի՞նչ այս գերագոյն պարգև, զոր Վերնախնամն անեղութեան մարդասէրն առատութիւն ձօնել հաճեցաւ 'ի շուք պարծանաց սանն Վատուբականի. և ընդէ՞ր մշտանուէր նուագս գոհութեան ո՛չ քաղցրաձայնեսցէ քաղաքն Վանայ ամենաբաւական աջոյն Յիսուսի, որ զբարձրացեալն իւր այցելութեան նշան լուսաւորդ՝ զխաղաղութեանն չարին հասանող սուր Աստուածամուխ՝ 'ի պատերազմ ընդդէմ խաւարական հին բռնաւորին՝ զէն անպարտելի տառաճենենեաց 'ի ձեռս Քրիստոնեան զինուորաց։

Մեծագոյն եւ փառաց Ճոխութեամբ հան-

գիտացաւ պարծանքն Վանայ քան զգերահռչակ քաղաքին Հռովմայ. զի Հռովմէականն Թա-գուհւոյ մեծաշուք բարեպաշտութիւն՝ 'ի խնդիր խաչափայտին զնա յարդարեալ ուղեւանդն կա-մաց բաղձանօք, և ջերմագին սիրոյ ստիպմամբ՝ երկնաձիր պարգեւ զմասն ընկալաւ 'ի կենաց փայ-տէ սիրով գգուանօք. բայց մինչ 'ի պատի-պաշտաման ոչ յարգեաց կամօք կայսերաց իւ-րոց չքնաղութիւն փրկչաւանդել պատուոյ մեծարա-նօք, կուսական կառոյց բարձրութեամբ. Ճանա-պարհ առար 'ի Հայաստան՝ բարձրագոյն հրաշից Աստուածայնոց բազում դրանշելօք. և լրեալ եթող զՀռովմ զընակն կուոց, ախորժ հանգու-տարան զմայրաքաղաքն ընտրեալ զՏարոյ՝ պաշ-տել 'ի նմին խաչապաշտութեան մեծաշուք փա-ռաց յարգանօք:

Այլ՝ և մեք այսոցիկ բարգաւաճ բարեաց հան-դիպեալ ծնունդքս Հայաստանի՝ եկայք ամենեքին երեւ 'ի դեմին անկցուք 'ի խոնարհ, և սերտ հաստատուն ծունր կրկնեսցուք առաջի Քրիստո-սեան պայծառ նշանին, ողբս տարածելով. զի որպէս խրախաճ կամօք յայսմ խաչապանծ քա-ղաքի բնակիլ յարակայ հաճեցաւ, նոյնպէս և Աստուածապէս մարդասիրեսցի: տալ զխաղաղու-

թեան աշխարհի այնմիկ, շինութեան քաղաքաց և գիւղից, բարեկարգութեան վանօրէից, պայծառութեան եկեղեցեաց, մաքրութեան կուսակրօն վանականաց, ուրախութեան քահանայից, բարեպաշտութեան իշխանաց, զգօնութեան ժողովրդոց, հպատակութեան կանանց, ողջախոհութեան կուսից, պահպանութեան այրեաց, յաջողուած բարեաց, քաղցրութեան օդոց, շահեկանութեան անձրևաց, և ամենայն ըստ իւրաքանչիւր արժանեաց ձիրք ամենառատ մարդասիրութեանն։ Շնորհեսցէ և ինձ արժանացելոյս, որ փառաբանեմ իմով տկար մասամբ բանահիւսութեան երգով՝ ՚ի բարեբանութիւն իւր հանդիսացս, պարգևք շնորհաց և լոյս բանականութեան և նուէրք բարերարութեան՝ ՚ի զարդ հօտացս, և յանախտութեան մարմնոյս։ Որպէս զի յայսմ յաւիտենի արժանաւոր վարուք քաղաքավարեալ, և առաքինութեան շքեղ պատմուճանաւ նորափետուր զարդարեալ, ՚ի հանդերձեալ յաւիտենին՝ յորժամ եօթնպատիկ պայծառ քան զարեգակն յարևելից փառօք լուսածագէ՝ առաջի աչաց անճառ գառնուորին Քրիստոսի, զուարճացեալ համարձակութեամբ պարգևս կացցուք յաշխարհախմբին յայն սանեան սովոր-

լի. և 'ի լոյս ածիլը նորա հոգւով պայծառացեալ՝ երանաւէտ կենաց անվախճան վայելից արժանի լիցուք միջնորդութեամբ նորուն անպարբառ բարեխօսութեան 'ի Քրիստոս Յիսուս 'ի Տէր մեր. որում ընդ Հօր իւրոյ և ընդ Հոգւոյն Ճշմարտի վայելէ փառք՝ իշխանութիւն և պատիւ այժմ և յամենայն յաւիտեանս ամէն։

## Դարձեալ Ներբող Բարեբանութեան

### 'Ի սուրբ Նշանն Վարագայ,

ըստ եղանակաւն յայս տանէն օրհնութեան գանձն,

—

Նշանն բանի օրհնաբանութեան գեղանըկար
Ցոլ՛ից որոց տալ փափաքէ հոգիս տըկար,
Երգով յաւէտ ըզգօնութեան քաղցըր քընար
'Ի զուրգ փառաց փայլին՝ որ մեզ կենաց հընար։
Բանին տակայն գայ 'ի հրաժեշտ երկնաբար՝
Զօնելով բան Տէրականին չափոյ յարմար,

Բայց քանզի զայս կենաց ՚նշան մեզ փրկաւոր
Եւ մարդացեալն վասն իմ՝ փրկիչ ամենակար,
Ո՞րպէս լռել ՚ի գովեստից ունիցիմ կար,
՚Ի հրաշափառ նորին փառաց՝ չելեալ յօժար։
Ղամբար պայծառ գեր արփենոյն լուսայարդար
Մեզ ցուցեալ պանդուխտ սեռից յայսմ կեցար։
Գեռ քառասնամ յԱդին հոգից կենդանարար՝
Երկվըռակօք մըչաճառան աղբիւրարար,
Ուսզանել շնորհօք զքաղաք մեր յոդւոց յար.
Յանճառ բարեաց վայելս ցնծալ երկրպագաւոր։
Դայեկնալեդ պսակ փայլեալ գերակատար
՚Ի գլուխ հարսին նոր Սիոնի փեսայաւոր։
Երկնածիր զանձ վիմադարան ընդ բազումս գար,
Հրաշիւք յայտնեալ ՚ի ճոխութի Հայոց աստ։
Սուր տիրամուխ հզօր աջոյն ամենակար,
Զարգիչ չըլոյ դրանճականին ընկըղնաչար։
Տեգ քառասայր մարտի վեհին անօրէնաբար,
Զէն հըսկային տապաստաբեկ յանկոյս խաւար։
՚Ի հեղձական յայս ծով կենաց լաստ տիրավար,
Վերաբերիչ մարդկան հոգւոց յերկնից կամար։
Աչանց մարուր մեզ ՚ի Հաւիճոյ փայտ փրկական,
Հրախփոխմոռ զարմիս բերեալ Աչքանազեան։
Ուսեալն պայծառ հոգւոց դարման տեղեալ մարդկան,
՚Ի խաչակիր երկնից ուղանըն կուսական։

Սքանչելաշնորհ լուսով փայլեալ արփիանման
'Ի Գալիլեայ գաւառժանէ; խաչադարան.
Ուր հրաշակերտ սիւնք 'ի լուսոյ երկնատասան՝
'Նշներան թուով աւուրց կանգնեալ անշիջական։
Խնամակ երդոց քաղցրը ձայնիւ հրեշտակական՝
Քառաթեւեան սրբոյ Խաչիդ անդ բարերան՝
Բանից վերնոց բախձանախումբ զարմանազան
Կառք խաչաբարձ եկաւորէ 'ի սուրբ սեղան։
Բոյլք անուշից խնկաստեղծեալ զմայլողական՝
Հովանաւոր տապանակիդ զոլ ափրական։
'Նուագարանաց հրաշասեռիցն օրհներգութեան՝
Զոյգ ընդ վերնոց 'ի քում զովեստներգաշնական։
Շարժումն ուժգին խաչավայրին հիմնասասան
Աչագնացոյց մածեալ փայտիդ Աստուածական։
Աստուածաբանէ փառաց Էլին հանդիսարան,
Ծագումն քո գործեաց ըղձեալըն Վարդեան։
'Նարդաստախոյ գեղափայլեանդ անզուգական՝
Դարաստ զուարճ հանդիսացոյց ընդ Հայաստան։
'Նորափետուր պաճոյճ զարդու վայելչութեան
Գեղեցկազարդ ըղձարդասունեկս կացոյց համայն։
Վասն այնորիկ գըրուցթ արկեալ ազանց մարդկան՝
'Ի սեա հրաշից երազէին ամենեքեան,
Ազք մեծամեծք և ստակականք գաւառական,
Եւ Վարդ անուն մեծ նախարարըն Ռշտունեան,

Բամամբ սրտի ցաւ 'ի հալցուած վշտօ տեսլեան,
Զի՞նչ է առն այս 'նոր փայլեալ պայծառութիւն։
Անդ ծանուցեալ զարփւոյդ ծագումն գերփայլական՝
Երգծափափք խոնարհէին հանդերձ յորդմանս
Գոհութեան ձայն բարձրացուցեալ լեռներան,
Բարերարնել զխաչեալն անմահ 'ի քեզ ալքայն.
Աչս աղօթիւ առնէին փառք բարձրութեան՝
Տանըս Տառեայ յաջոյն տուեալ Աստուածայնոյ
Յարփւոյն կենաց ցոլք 'նշուլից սրբութեան՝
'Ի լոյս Վ.անաց զմաքրացեալ մտաւորական.
Խաչ խմ անդրէն 'ի 'նեբրայեցն կարգ դարձեալ,
'Նըշուդ բանի վերերգեցից փայլեղ ծագեալ,
Խորին խորհուրդ 'ի քում գիտակ 'նըկարագրեալ,
'Ի դասակարգս անճառելեաց գերազանցեալ։
'Նըշտառ փայլեկ աշխարհալիր Ճիւղատերմեալ,
Ըշնորհաց պտղովք ըզօթեփելս առատ լցեալ,
Գուրանց երկնից 'նոր բացեալն հրաշակերտեալ,
'Ի յարձանուստ առաջ կենաց կամուրջ արկեալ,
Բախանըսէր կենաց զինւոյն հընձան յորդեալ,
Զուգաց թախիծ ոչ բժկէ զուարթացուցեալ,
Ողորմութեան ձիթաբերեկոյն շիւղ տեսեալ,
Յերկիրդ տապանանդ Վ.արդայ վերաբերեալ է։
Յաղթողական ցուպ լուսաբանդ հրաշափառեալ,
Զնորս Խորայէլ յանդորր 'ի կեանս ծովաքերծեալ,

Սուրբ 'նըկանակ զարւոյ անհեղ լըռնացրեալ,
Ըզձոյլըն չէին Մաղխոսն զոչի հարեալ:
Ընչուող ձեռին վէմ 'ի բարձանց խորտաչառեալ,
Պատկերաձեւոր 'նախնի չարին վէհ լըռեցեալ:
Բազմական զոյս կենդանոյս զփառսն փըշրեալ,
Յաւէրժ 'ի փառս արքայութեան երկրպագեալ:
Գըրգաթ արեամբ զաւէին սրբոց ցօղաթացեալ,
Գեդէօնին երկնաւորի 'նըշան պատուեալ:
'Ի ծաղկածին լերին աւօր վերաբերեալ,
Ընդ աջոյն Աստուածային մանկացեալ:
Սկուտղ ամէն կենաց հացի ճախարակեալ,
Ըզգեցոյց հոգւոյ անաղխական լուսացեալ:
Վարդ կարմրերանգ արիւնաներկ բոցավառեալ,
Յանոյշ բուրմամբ զաշխարհ հոտեամբ ուրախացուցեալ:
Աչարմնեան բուրվառ՝ ցոլմամբ խնկաբուրեալ,
զԱծարանակ յարկին լուսոյ փառաւորեալ:
Բուռնակալն արքայութեան տառ ախտողեալ,
Զանձառ բարեաց պատուականացն հրատարակեալ:
Դաշին անդարձ պայմանակցի հաշտահաստատեալ,
'Նոր հաշտութեան պատճառ լեալ արիւնացեալ,
Արիւնաձեւն սուրբ բարունակ երկնածաղկեալ,
Զանմահարարին ողկոյզ փառօք պտղաբերեալ:
Պըտղոյն կենաց ծառ կենարար մերձաւորեալ,
Հովեւորդ մարդկան ուսեալ բերս ընծայեալ:

Երկիր լուսոյն ողմնելով գեղաշողեալ,
Յաղջամղջին սաստեալ գիշեր չար բորբոքեալ։
Տան Բագրատեան բընակութիւն որ յարդարեալ,
Աստուածատուր մանկանց հրճուանս օժտաւորեալ։
Խաղաղանին Մովսէսին դաս դրուագեալ,
Յընտրութեան դաս արդարութեան կարապետեալ։
Նման շնորհաց բարեձանց Աստուածազգին,
Ազատութեան մեզ աղջաբար կենդանակիր։
Ուղեշարժակ առանց Մարեկայ ծառ երկնածին,
Զաստոյ կախեալ յաղջամկէզ խոյ անախտակիր։
Բախճան հոգւոց ունայն փառաց պարգեւածին,
Մարբուր սրբոց յանկոյացիչ կուշա ըմպելի։
Ինքնագոյին մեծ բարձրութեան հանդիսադիր,
Մարտացու զէն անպարտելի փայլեալ յերկիր։
Նախահրաւէր մարդկան ՚ի կեանս փայլմամբ երկիր՝
Դերաբեգակն եօթնալուս խաւարացիր։
Սատակապարծուր կողոպտեալ վրէժխնդիր՝
Ցուցակութեամբ անկից վերայն Ածակիր։
Բանկերն ըղձօն խաչակրօնից պետ անպատիր,
Յերկրէս Հղանդ խորախոյս զօրեղ լեալ անձնածիր։
Բեղխարբայն գլխոյ կլափիչ ասպար փոջոռիր,
Հերա անկանխութ արխնամած ներկեալ կարմիր։
Ուստ դարաստա գեղեցկատունկ վայելչադիր՝
Ընդ քառակողմն ամենածաղիկ փայլմամբ ընծայիր։

Յարադրեալք՝ բուրմանցըն եւղ յաղանց ջրեր՝
՚Ի յըղմնցուածն հողւոյ ՚ի հոտ անուշակեր։
Նեղելոց դու մխիթարիչ ո՛վ փայտ կենաց,
Յորդայթից միշտ պաշտպան մարդկան ազգաց։
Ըստերմարան Աստուածաճոխ վերին փառաց՝
Զեղուն լցեալ արդեամբք փրկչին չարչարանաց։
Աստուածիր անպարտելութեան ախեզելոց՝
Միջնորդ բարի ու բուն բարին զինուորաց։
Նաչանճարկու հողեկանանց պատուաչարաց,
Պահան ամուր անպարտարար ՚նենգից դիւաց։
՚Ի հալածել զայլըն խեղդիչ քնար լուսազգեաց՝
Քաղցրաձայն հնչմամբ հրաշից աշալնազգեաց։
Նկարախումբ չար փաղանգից մերժիչ ՚ի բաց՝
Աստուածագործ ըղքանչելեաց զարմանալեաց։
Պարիսպ հզօր յուսացելոց յախտըս վըշտաց,
Ցուպ զօրութեան վերականգնիչ մեզ տկարաց։
Աստուածութեան վերնաւորակ սուրբ հաւանաց՝
Ծով անհաշման ընդ քաւածողս համատարած։
Ըղձոց երկնից բնակացուց ՚նըշան կենաց՝
Ադամանդեալ յանկեան գլխոյ վիմին շնորհաց։
Տեղի պայծառ արփիաշող փայլատակմանց՝
Լուսացուցեալ ՚ի Վարագեան ժայռի բարձանց։
Օրհնութե՛ ձիրք փառաւորիչ Հայկեան ազանց՝
՚Ի խընամոց Վերինոյն ձօնեալ ՚ի ցինծ անանց։

՚Նըպատատաձիր ով՝ յինւորան Տարեան կողմանց՝
Ցանկալ ոգւոյն ընծայեալ Տեառըն զօրութեանց։
Լին ընտւեր կար հանդամանն նոր յարդարած՝
Թըռփիչաձիղ վերաթեւեալ օդասլաց։
Խոկավառինչ լոյս նշուլաձաղ ծաւալուած՝
Ցաշխարհի լոյս ծագելոյ Տէ շնորհիւ փայլած։
Աւաշի քո ՚ի դուռն եկեալ ազգք մարդկան՝
Խնդրեն ոգւոյ վերընծայեն համբոյր յարգման։
Սիրաբորբոք ըղձիւ ՚ի հայց աղերսութեան
Ընկանելով՝ շնորհս ընդունել յօժար բաղձանս։
Անդորրութեան յերկնային կեանս դու գանձարան,
Զըրկեալն անձնեայն կաս անխափան։
Ցանդ բռնաշէն հինից չարեաց ՚նըշաւակեան՝
Ըզգեց կայոյ՝ ՚ի քեզ խաչեալ Ածըն Բանն։
Երկրաւորաց՝ երկնից բարեաց պարգեւական՝
Թաւալթելիք սուրբ ըմպելիք հաստատեցան։
Արդեանց փրկչին հատուցակաց միջնորդ բաշխման՝
Թաւաչելեաց դըրունք բացեալ ՚ի քում նիւան։
Լուսայման յախտից՝ արփիանեալ գեղ սաղան՝
Մարմնամարտ մամբ Լին հատեալ քառակողմեան։
Յարափայլուն ակնանկատ շարքերկուական՝
Ոսոյն մեծի քահանայի զարդ տիրական։
Ոսկոյ մանկանց նոր Սիոնի պարծանք պատկան՝
՚Ի խաչապարծ սուրբ ըերանց դաւանական։

Վըսեմ փառաց Աստուածայնոյ նոր բնակարան՝
Հանգստացեալ վըճիտ լուսով անշիջական:
Հրանիւթ սեւոց պատկառելի մաքուր ուղան,
Կայծակնակիր հըրոյ մարմնոյն տէրունական:
Աշխոյժ սիրոյ Կենարարին հանգստարան,
Բոսորափայլ ցոլացայտեալ շըքով 'ի Վան:
Նոր հաշտութեան մաքուր նաւակ ալքրունական՝
'Ի կուտախումբըն գետապնոց նուիրական:
Նարօտ նըրկեալ շուշաղատիպ 'ի գոյն որդան,
Ցեբախայլըն տարանոյ զարդ պաշտաման:
Որբուականին յարալեզող ժայռին Լեզբեան՝
Կարշնեղակս անդընդասոյզ սուրբ ախոյեան:
Խիւբամոլեց վէս վոհմակաց տարագրական՝
Գործիդ փըկչին 'ի մահ մարմնով խոնարհութ̅ե:
Մաղթեմք 'ի քէն, ով ո̅ր Նշան գերհրաշական,
'Ի քոյ թևոցըն հովանի լեալ ապաստան:
'Ի պատահար չար դիպուածոցըն դիւական՝
Պահեա՛ զաշխարհ՝ միշտ անփխաս և անսասան:
Բանից խոլից խաչակրանից աղէտ մարդկան՝
Դու ապաւէն յաւուր չարի լե՛ր օգնական:
Զամենեսին 'ի բարի վարս վայելչութեան
Ծաղկազարդեա՛ քոյին շնորհօք անբաւական:
Արանց տալով արիութիւն անընկճական,
Կանանց՝ համեստ հնազանդութի մաքրութ̅ե:

* *

ՅԱստուածային այգի մշակաց՝ կար գործութեան,
Աշխատողըն ըղձարծն առնուլ զանբծականն ։
Եկեղեցեաց՝ հաստատութիւն անդրդուական,
Կարգաց կրօնից՝ պայծառութիւն արփիանման ։
Աշակերտեաց՝ յարատեւումն 'ի սրբութեան,
Մեղաւորաց՝ առըր ապաշաւ յօժարական ։
Ննջեցելոց՝ հանգիստ 'ի փառս արքայութեան,
Եւ ամենից՝ միշտ յաջողուած բարեկրութեան ։
Վասն իմ արդէն յաղերս բանի անձն իմ բերի,
Որ երկրպագն հանգստոցաց այսմ տաճի,
Աղաչանօք դիմադարձին գալ 'ի ծընրի,
Զի զԹադէոս, ո՛վ սուրբ Նըշան, յիս 'ի դերի,
Նըւէր բարեաց 'ի պարգեւացըդ տալ ձըրի,
Աներկեան խընդիւ յատեաց պանծել վայրի ։
Անձնըս տըկար չունի երբէք կալ 'ի կարի,
Եթէ Նըրսաստ կենաց փոյթով ինձ դադարի ։
Նեղեալ հովիս 'ի մարտ չարին վիրաւորի,
Թէ ո՛չ հասցէ վեհ օգնութի՛ սուրբդ տատարի ։
Դու ինձ Նըրշոյլ դեղարփենի յայս Կեդարի,
'Ի ըշշողըդ մընամ խըղճուկ 'ի խաւարի ։
Երրորդ ապա հասցէ օգնել ինձ տըկարի՝
Խընդրանօք հայցեմ՝ որ յերս անձին իմոյ լարի ։
Ցամաքն ակերք իմ ցօղովդ քո Զօնն պարարի՝
Ծաղիկ հոգւոյս առըր վարդակաւըդ զալարի ։

Իւսանդոս միայն քոյդ դարմանու ողջ զարդարի՝
Մոլար կամաց իմ ձկտանք քեւ գայ 'ի բարի։
Ուրեմն դու, սուրբ փրկանաւք կենարարի,
Կենացոյ զիս՝ անեղ 'ի կեանս հոգւոյ արի։
Յոր վայելեալ անդրաւատակէս յերկու դարի,
Փառս երգեցից ընդ երջանկաց սրբոց շարի։
(Յաղթխաչընկլին)(*)զերգս կրբէ յինքն ըզարի,
Որ ըղձիւքով նախկին ամոյն 'ի հուն վարի։

---

(*) Այսինքն՝ զթուականն 1816։

# ՍԱՒԵՐԻԱՆՈՍԻ

## ԳԱԲԱՂԱՑԻՈՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

## ՃԱՌ

*Ի վերայ բանին՝ թէ «Հուր եկի արկանել յերկիր» և այլն։*

## Ն.Օ.Տ

—

’Ի վայելս մերայոյն Բանասիրաց՝ կամ եղև ինձ ’ի վերջ մատենկանս յաւելուլ զառ ’ի Հարցն մերոց թարգմանեալ զգեղեցիկ ճառն Սեւերիանոսի (կամ որ նոյն է՝ Սեբերիանոսի) Գաբաղայեցւոյ Եպիսկոպոսի, ասացեալ ’ի բանն »Հուր եկի արկանել յերկիր«։

Մի յայնցանէ է ճառս այս, որոց անծանօթ կան ցարդ Հնախոյզքն Եւրոպայ՝ ոչ միայն՝ առ ’ի չգոյէ Յունական բնագրացն, այլև առ պակասելոյ ’ի հաւաքոյթս անդ նախնական թարգ-

մանութեանցն 'ի Հայ՝ տպագրութ՛ի 'ի լոյս ընծայելոյ յարդիւնաշատ Հարցըն Մխիթարեայ 'ի վանս Ս. Ղազարու 'ի Վենետիկ յամին 1830։

Օրինակ ճառիս կայր առ իս 'ի վաղուց հետէ իմով իսկ գաղափարեալ գրչութեամբ յամին 1827, 'ի Ս. Փրկչի վանս Ակնայ 'ի միջէ և եթ յանթուական ընագրէ եղելոյ առ բարեգլեայ Դխողի նորին քաղաքի Յովհաննու Արքեպիսկոպոսի Զմիւռնացւոյ։

Մ. Մուքրէանց։

# ՍԵՒԵՐԻԱՆՈՍԻ

## ԳԱԲԱՂԱՑԻՈՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

## ՃԱՌ

Ի ՎԵՐԱՅ ԽԱՉԻՆ՝ ԹԷ [illegible]
ԵՒ ԱՅԼՆ։

—

Զմի ունելով աղբիւր ջրոյ՝ բնութիւն, յոլովից և զանազան կենդանեաց զբժշկութիւն ծարաւոյն շնորհէ· զի արջառոյն անդեայք և ոչխարացն հօտք առ նա ընթանալով՝ արբուցումն ընդունին· չորքոտանեացն հօյլք և որովայնապարար զազանացն սեռ 'ի նա ձեպելով՝ լնուն 'ի նմանէ, զտենչական կարօտութեան իւրեանց· նաև թռչնոցն բազմաթիւ յոլովութիւն յայս 'ի նա եղեալ՝ ըմպեն 'ի նմանէ, և զուարթ ծարաւոյն անդուստ բու-

ծանենն ։ Եւ ոչ միայն զանասնոցն և եթ լնու աղբիւրն զալէաս, այլ և բանաւոր մարդկան առատաբար զլրումն կարօտութեան աննախանձ ընձեռէ · և միանգամայն ամենայն տեսակք կենդանեաց 'ի միոյ աղբերէ ըմպելով՝ յագին աննուազ։

Այսպիսի իմն է Աստուածեղէն գրոց վարդապետութիւնք, սիրելիք, մի է՝ վասն զի 'ի միոջէ է · յԱստուծոյ ամենակատար իմաստութենէն ունելով զհոսումն՝ զյոգունց և զզանազան մարդկան զսիրտս իմաստնացուցանէ, և աշակերտս յարմարէ, և զեկեղեցիս անուշահոտութեամբն լնու ։ Ծարաւիք ըմպեն · խաւարեալք լուսաւորին...(*)։ Հիւանդք բերցան և կամ ուրաղա զթիւրութիւն փայտիցն քաջուսումնաբար շուրջ բերելով՝ բանոնոր յարմարաբար սահմանեալ՝ որ հանդերձեալ են 'ի տեսակ կազմել, քաջագիր և պատշաճ զփայտն գործեն ։ Իսկ Տէր մեր՝ որ անձանց մերոց խոտորելոց է ուղիղ, ոչ լարիւք և քանոնօք զանձինս մեր յղկէ,

---

(*) Աստանօր պաւք ինչ պակասեն ։

պըլ՝ բանիւք և վարդապետութեամբք 'ի ճշմարտութիւնն խոնարհեցուցանել. և զանազան տեսակք վարելով՝ 'ի բարեպաշտութիւն զոգիս մեր ուղղել։ Յաղագս որոյ 'ի ձեռն տեսակաց և այժմ դաստիարակէ զմեզ։

Տղայոցն մանկանէր մարքն՝ ցորքան 'ի մատաղագոյն հասակին և յանզօր մանկունքն անձին, զկաթնասնոյց աղբիւր ստեանցն զօրացուցանելով՝ զատանց աշխատութեան զկերակուր կաթինն կարկատել 'ի նոսա փութան։ Իսկ յորժամ 'ի մեծագոյնն հասակ և 'ի զգայականն եկեսցեն, մինչև ստամոքք այնուհետև զօրել զփափուկս 'ի կերակրոցն ծամել, յայնժամ մարքն զխստութիւն հացին մանրելով՝ կակուղ և փափուկ զօրէն ողղոց զկերակուրն պատրաստեալ՝ 'ի ներքուստ 'ի բերանոյն խուեանց ընծայեցուցանեն։

Այսպիսիք ոմանք իցեն և վարդապետք եկեղեցւոյ. քանզի որոց սակաւիկ զգնութիւն մտացն տղայական ունիցին, ոչ դժուարիմանալիս և դժուարըմբռնելիս նո-

ցա զիմաստս առաջի արկանեն, այլ՝ զօ-
րէն մարգ զատինս 'ի նոսա խոնարհեցու-
ցանեն, և զանխարդախ բանին զկաթն
հեղ հոգւով ձգել՝ նոցա պատուիրեն.
զի ապա յորժամ 'ի մեծագոյն բանից
ըմբռնումն հանճարով աճիցեն, զմեծա-
մեծաց խորհրդոց յայտնել սովորեսցին
նոցա զիմաստս։ Այսպէս և Պաւղոս առ-
նէր. զի ոքք տակաւին տղայքն էին՝ գրե-
լով նոցա ասէր «կաթն ջամբեցի ձեզ,
և ոչ հաստատուն կերակուր»։ Նոյնօրի-
նակ Տէր մեր մինչև ցայժմ ևս առնէ.
քանզի ըստ չափոյ բնութեան լողայն
զաւետարանական իմաստիցն զգիրս զու-
գակշռելով, յառաջ քան զժամանել ա-
ւուրն՝ իբրև տղայոցն՝ կակուղ և դիւ-
րալուծանելի զկերակուր բանին մեզ ըն-
ձեռէր. իսկ այժմ զի զհանճար իմաստու-
թեանս մերոյ աճեցեալ ետես, 'ի մեծա-
մեծ աւանդութիւնս թողացուցանէ վայե-
լել մեզ։ Եւ զինչ ասէ.—

«Ծառայք եմք [illegible] և ոչ եմք [illegible]
[illegible], այլ [illegible]»։

Ոմանք տղայական մտօք կարծեցին, թէ

եկեալ իցէ Տէրն՝ հրով ծախել զամե-
նեսին, և որով սատակել զարարածս։
Եկայք և մեք զնոյն՝ իբրև տղայք՝ այն-
պիսի բանիւք առ Տէրն խօսեսցուք։

«Մեղք հակառակ մեզ հաստատեցան.
մահ զմեզ զրաւեաց. գեհենն և հուրն
մեզ միշտ սպառնայ. պիղծ դիւացն հոյլք
զմեզ յաղթահարեն. զքեզ օգնական ու-
նել ակն ունէաք, գալ և կեցուցանել
ըստ կանխասաց բանից մարգարէիցն։ Իսկ
դու բարերարդ եկեալ՝ ասես «Հուր եկի
արկանել յերկիր. և ոչ եկի արկանել
խաղաղութիւն, այլ՝ սուր»։

«Ընդ սատանայի պատերազմն ոչ զօրե-
ցաք, վասն զի զէն հաւատոյ ոչ գոյր մեր,
և զյաղթանակ կնքոյն ոչ ունէաք՝ զվա-
հանն արդարութեան։ Մինչ դեռ ՚ի
դրախտին էր Ադամ՝ կողոպտեաց զնա
սատանայ և մերկացոյց յանմահական լու-
սոյն։ Յաղագս որոյ ամենեքեան մեք մերկ
յօգնականութենէն լեալ՝ առ քեզ գո-
չեցաք ասելով «Դա՛տ արա ինձ Տէր ընդ
զրկողսն, ա՛ռ զզէն և զասպար քո, և
արի՛ յօգնել ինձ, հա՛ն զսուր յանդիման

նեղչացն, և արգե՛լ զնոսա. ասա դու ցանձն իմ՝ փրկութիւն քո եմ ես։ «Այլ դու եկեալ՝ ասես «Ո՛չ եկի արկանել խաղաղութիւն, այլ՝ սուր»։

Եւ մեր են որբոցն աղաչանք, որք յաղագս խաղաղութեան պաղատին, վասն հանդարտութեան աշխարհին, զպատերազմ ոչ կամին, 'ի սրոյ հրաժարին։ Եւ եկեալ՝ ասես «Ոչ եկի արկանել խաղաղութիւն, այլ՝ սուր»։

Թշնամին արդարութեան զզօրան իւր հակառակ մեզ զինեալ՝ զգեան. զամենեսին զմեզ երկայրի սրով խոցոտեալ. մեղք մերժեաց 'ի կենաց, և 'ի դժոխս արկ։ Յաղագս այնորիկ զթութիւն խնդրելով 'ի քէն ամենայն որբոցն բազմութիւն, պար առեալ՝ առ քեզ գոչէին ասելով «Որ հովուեսդ Իսրայէլի՝ նայեա՛ց որպէս խաշին Յովսէփու. երևեցո՛ զերեսս քո 'ի մեզ. զարթո՛ զզօրութիւնս, և եկ 'ի կեցուցանել զմեզ»։ Այլ ասես «Ո՛չ եկի արկանել խաղաղութիւն, այլ՝ սուր»։

Ո՞ւր են աւետիքն քո՝ զոր առէիր աշակերտացն քոց «Խոնարհեցուցանեմ 'ի

մեզ իբրեւ զգեստ զխաղաղութիւն իմ. Ե
իբրեւ զՀեղեղատ ծածկեսցէ զփառս Հե-
թանոսաց». կամ ըստ նախաձայնութիւնք
սրբոց Հարցն, որ ասէին «Ահա՛ ելցէ Տէր
եւ խորտակեսցէ զպատերազմ». զի յետ
բառնալոյ պատերազմին՝ խորին խաղա-
ղութեանն ակն ունէաք: Եւ եկեալ ա-
սես «Ո՛չ եկի արկանել խաղաղութիւն,
այլ՝ սուր»:

Մարգարէս յառաջագոյն տապեցեր,
Հայրապետօքն կանխադուշակեցեր, զի-
նուն արդարութեան զնոսա վառեցեր կալ
ընդդէմ կռույ սատանայի՝ խորտակել
զպատերազմ՝ եւ խաղաղութիւն աշխար-
հի ընձեռել. որպէս մի ոմն 'ի նոցանէ
գոհարանելով ասէր «Օրհնեալ Տէր, որ
ուսոյց զձեռն իմ 'ի պատերազմ, եւ զմա-
տունս իմ 'ի ճակատամարտ»: Եւ նորա
պարտեալք՝ թիկունս դարձուցին. եւ առ
քեզ գոչելով գոչէին «Տէ՛ր, խոնարհե-
ցո՛ զերկինս՝ եւ էջ»: Եւ խոնարհեցու-
ցեալ՝ իջեր 'ի փրկել զազգ մարդկան
խաղաղութեամբ. եւ ասես «Ո՛չ եկի ար-
կանել խաղաղութիւն, այլ՝ սուր»:

Այս ընդէ՛ր երանես զխաղաղարարսն՝ ասելով «Երանի՜ խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին»։ Զինչ՝ որ այլոց ուսուցանես խաղաղութիւն անել. զինչ՝ որ ասես վասն քո «Ո՛չ եկի արկանել խաղաղութիւն, այլ՝ սուր»։ Ընդէ՛ր և դու՝ Պաւղոս՝ ասես վասն Քրիստոսի. «Նա՛ է խաղաղութիւն մեր». ոչ լսես նմա՝ որ ասէ «Ո՛չ եկի արկանել խաղաղութիւն»։

Թշնամի մեր եղև Աստուած յաղագս մեղաց մերոց. միջնորդի պէտս ունէաք՝ լուծանողի որ 'ի մէջ մեր էր թշնամութիւն, և զբարձր խաղաղութիւն պարգևողի։ Յաղագս որոյ միջնորդի և հայրն մեր Յովբ աղօթէր և աղաչէր ասելով «Երթէ էր միջնորդ, եկեալ միջնորդէր, և լուծանէր զթշնամութիւն (*)»։ Արդ զայսմ զհակառակն ասես «Ո՛չ եկի արկանել խաղաղութիւն, այլ՝ սուր»։ Եւ-

(*) Հայ բնագիրն տպագրեալ ունի գրեալ «Յանկարծ (այսինքն՝ եթէ [թէ]) գոյր միջնորդ, և յանդիմանէր և լսէր 'ի մէջ երկոցունց» (Թ. 33)։

յումմէ՞ պատուհեան վստահացուք ըն-դունել զոր խնդրեմքս։

Այլ՛ագգ, ասէ, հուր եկի արկանել, ոչ յերկիր՝ որ 'ի ձերոց ոտից կոխի, այլ յերկիր՝ որ յիմոյն աջոյ ստեղծաւ։ Վասն զի սատանայ 'ի սիրտս մարդկան փուշ և տատասկ սերմանեաց, հուր եկի արկանել 'ի փշոց վառումն, և 'ի նորա-գումն ոգւոց։ Վասն այնորիկ ասեմ, թէ «Հուր եկի արկանել, և կամիմ՝ թէ ար-դէն իսկ բորբոքէր»։ Քանզի պարտ է ինձ մաքրել զերկիր իմ. վայել է ինձ զսատանայի զգառնաբեր զխասաակալր ըզ-բոյսն հրով ծախել. զի մաքուր անձամբ զմաքուր զերկնային սերմն ընկալցի։ Վասն այնորիկ ասեմ «Հուր եկի արկանել»։

Ստեղծեալ իսկ բարի զմարդն յերկ-րէ, զկայծ Աստուածային հրոյն 'ի սրտի նորա բնակեցուցի՝ յաղագս ջերմագոյն նմա ունելոյ զսէրն առ Աստուած։ Եւ վասն զի զայն Աստուածային կայծակն բազմահօս չարութեամբք բանսարկուին ծածկելով շիջոյց, պարտ և արժան է ինձ դարձեալ վերստին գալովս յերկիր՝

զնոյն զԱստուածային փայլակն և զնոյն իսկ զջերմութիւնն՝ մարդկան տալ ունել, զի գեղեցկապէս ամենեքեան փայլեսցեն ճառագայթիւք։

Սանձամանեօք ամբարշտութեան զանձինս մարդկան սատանայ սպան։ Պարտ է ինձ հուր արկանել յերկիր. զի լուծանելով և մեղկելով զ'ի սատանայէ լեալ օղուց զձմեռն անհաւատութեան՝ անքոյթ և խաղաղ զմիտս կացուցից, առ 'ի զուարճանալ և զալարաբեր լինել՝ զարդարութեան զսերմանս պտղաբերելով։ Վասն այնորիկ ոչ եկի արկանել խաղաղութիւն, այլ՝ սուր։

Քարոզեցէ՛ք զսա, իմ առաքեալք, աւետարանեցէ՛ք ամենեցուն. ժողովեցէ՛ք զհօտն իմ հոգևոր 'ի փարախն սուրբ. տո՛ւք նոցա աւետիս՝ մի՛ երկնչել 'ի հակառակորդին յառիւծակերպ դաշմանէն. զի ոչ եկի արկանել նմա խաղաղութիւն, այլ՝ սուր։

Արդէն իսկ եռես, թէ պատերազմ սատանայ. զոչէ իւրով բանակաւն՝ ասելով «Զինչ մեր և քո, որդի Բարձրելոյ»

եկիր յառաջ քան զժամանակն տանջել զմեզ։ Այո՛, ասէք՝ զի՞նչ մեր և քո, որք զամենեսեան սրով մեղաց խողխողեցէք, և խաբէական վարդապետութ͞բ զնոսա խոտորեցուցէք. մթով անգիտութեան զաչս մտաց նոցա խաւարեցուցէք։ Ասէք՝ զի՞նչ մեր և քո, որդի Աստուծոյ Բարձրելոյ։ Պա՛րտ և արժա՛ն է ինձ զսուրն ընդդէմ սրել, և պատշաճագոյն է ինձ 'ի դժոխս ընթանալ՝ թողլով զխաչին իմոյ զօրութիւն՝ զօրականաց և զօրավարաց։ Ընդ Աստուածային զօրութեան խաչիս պա՛րտ է ինձ 'ի դժոխս ընթանալ, և անդ զօրովյն օձին սրով հերձանել, և որ 'ի նմա են արգելեալ ոգիք՝ 'ի կեանս թռուցանել։ Ո՞չ եկի արկանել խաղաղութիւն, այլ՝ սուր։

Զօրացարո՛ւք, ձե՛ռք լքեալք և ծո՛ւնկք կթուցեալք. մխիթարեցէք զկարճամիտս խորհրդով. ասացէք՝ զօրացարո՛ւք, մի՛ երկնչիք։ Ո՞չ արդեօք լուայք 'ի մարգարէէն՝ որ ասէ «Յաւուր յայնմիկ ածցէ Տէր զսուրն իւր սուրբ 'ի վերայ վիշապ օձին կամակորի և փախուցելոյ, և սպանցէ զվիշապն՝ որ 'ի ծովուն թա-

գուցեալ է։ Արդ տեսցէք մարդկան· մխիթարեցէք զկարծամիտս, ով տաքեայք, ասելով՝ ոչ եկն թշնամեացն արկանել խաղաղութիւն, այլ՝ սուր· քանզի իմ սուր՝ է նմա սուր նեղութեան· իսկ ձեզ՝ խարիսխ հաւատոց։ Բազում շրջանակս ամաց սատանայի ծառայեցիք· յոլով ժամանակս սիրով զձեզ ընդ նա կապեցիք՝ զկամս նորա կատարելով։ Պա՛րտ է ինձ այսուհետև զթշնամութիւն 'ի մէջ ձեր արկանել· իրաւացի՝ է ինձ՝ թշնամիս զձեզ փոխանակ սիրելեաց նմա կացուցանել· զի որով մասամբք գործեցիք զփայտս և զքարինս՝ և աստուածս անուանեցիք, զնոյն դարձեալ մասամբք ձերովք կործանիցէք։ Պատշաճագո՛յն է ինձ՝ սուր 'ի մէջ ձեր և սատանայի արկանել· զի զորս լեզուաւ պաշտէիք զաստուածս օտարս, 'ի նոյնմէ դարձեալ գարշեցիք։ Ո՛չ եկի արկանել խաղաղութիւն 'ի մէջ ձեր, այլ՝ սուր։ Եթէ ոչ խոնարհեցուցից 'ի թշնամին ձեր զսուր իմ, ձեզ ոչ է խաղաղութիւն։

Եւ եթէ պարտ և արժան է այժմ զ

ևս առնուլ զծառեալս, ո՛չ եկի արկանել խաղաղութիւն, այլ՝ սուր և որոշումն։ Տեսե՞ր զԹեկղ՝ որ երբեմն հեթանոս գոլով... բայց յորժամ լուաւ զվարդապետութիւն Պաւղոսի՝ վազվազակի ՚ի բաց զատաւ յազգատոհմից և ՚ի սիրելեաց, յազգականաց և ՚ի ծառայից, յամուսնոյ և ՚ի փափկութենէ։ Տե՛ս աստանօր և զՍաւղոս՝ որ երբեմն Թշնամանիչն էր և հալածիչ. այլ յորժամ լուաւ զբանն եկեալ ՚ի վերուստ, նահանջեալ դադարեաց ՚ի յամառութենէն. սակս որոյ կոչեցաւ Պաւղոս. որ յառաջագոյն անգիտութեամբ ռա՛զմ յարուցանէր եկեղեցեաց Քրիստոսի՝ զօրաւիգ լինելով աշխարհի ազգին Հրէից. իսկ ՚ի վերջոյ ոսոխ ազգատոհմին իւրոյ եղեալ՝ ջերմագոյն սիրով քարոզէր ըզբանն Քրիստոսի։ Հայեա՛ց տե՛ս՝ զիա՛րդ բանն Աստուծոյ իբրև զսուր որոշէ յազգականաց և յընտանեաց՝ զհաւատացեալս աւետարանական վարդապետութեան. վն որոյ մարգարէն գոչէ ասելով, եթէ «Սրբեսցէ զնա հրով»։ Վասն այնորիկ և

Յովհաննէս աղաղակէր «Նա զձեզ մկըր-
տեսցէ հրով»։ Յայս հուր և սուր և Իսա-
հակ նկատեալ՝ ասաց «Ահա՛ հուր, և ա-
հա՛ սուր, ո՛ւր է ոչխար յողջակէզ, Հա՛յր»։
Զայս հրոյ զօրութիւն և Մովսէս ետես
'ի լերինն, քանզի տեսանէր զմորենին
վառեալ՝ որ ո՛չ այրէր. որպէս Նախա-
հարքն մեր պատմեցին մեզ՝ իմացեալ
վասն սրբոյ կուսին Մարիամու, որ ծնաւ՝
և մնաց անապական։

# ՆՇԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

[illegible]

—

*Դարձատանակ·* [illegible]

*Դրանշակն·* [illegible]

*Կետադր·* [illegible]

*Բաղձանակ·* [illegible]

*Իմաստուլ·* [illegible]

| Եր· | Տող· | Վրիպակ· | Ուղիղ· |
|---|---|---|---|
| 15. | 2. | *պատուամատոյն.* | *պատուամատոյն։* |
| 51. | 3. | *պայծազգեստ.* | *պայծառազգեստ։* |

[illegible] ԳՐԱԴԱՐԱՆ